

Այգեհովիտ համայնքի գրադարան

ՀՀ Մշակույթի նախարարության նախաձեռնությամբ «Գրքի երևանյան փառատոն» ծրագրի շրջանակներում «Չանգակ» հրատարակչության նոր հրատարակություններից մեծաքանակ գրականություն նվիրաբերվեց Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին: Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները նվիրաբերված գրականությունը հանձնեցին Այգեհովիտ համայնքի գրադարանին: Այգեհովիտի գրադարանը վերանորոգված, նոր գույքով համալրված գրադարան է, ունի հարուստ ֆոնդ և բազմաթիվ ընթերցողներ:

Նվիրաբերված ժամանակակից գրականությունը՝ գիտահանրամատչելի, մանկական, երիտասարդ գրողների պահանջարկ ունեցող հրատարակություններ մեծ հետաքրքրություն կառաջացնեն ընթերցասեր հասարակության շրջանում:



